



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 12(141) 26.12.2016թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
88	«Արցախագազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 31Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 44Ն որոշումը.....	3
	ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
89	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի մարտի 31-ի N 18-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի N 30-Ն որոշումը.....	5
	ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
90	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի տեղադրման թույլտվության ձևը սահմանելու մասին» ԼՂՀ քաղաքաշինության նախարարի N 662-Ն հրամանը...	6
91	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի 2016 թվականի հուլիսի 5-ի N 30-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի N 46-Ն հրամանը.....	8
	ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիա տրամադրելու, ուժը կորցրած ճանաչելու և գործողության ժամկետը երկարաձգելու մասին որոշումների	

	պատճենները.....	9
	ԼՂՀ առողջապահության նախարարի կողմից լիցենզիա տրամադրելու և տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները.....	39
	ԼՂՀ էկոնոմիկայի նախարարության կողմից նոյեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	42

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2016 թվականի դեկտեմբերի 2-ին
պետական գրանցման համարը 3031688

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի

N 44Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱՆԳԱԶ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ
ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱԿԱԳՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 31Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «ա» կետին, 15-րդ, 16-րդ հոդվածներին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» թիվ 23Ն որոշմանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 23-ի N 735-Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

1) ամսական մինչև 10 000 խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներին, բացառությամբ սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված սպառողների, վաճառվող յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր բնական գազի սակագինը՝ 139 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին վաճառվող յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր բնական գազի՝

ա. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձևը՝ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝

$$P_{\text{գ}}=212 * E,$$

որտեղ՝

$P_{\text{գ}}$ -ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/1000 խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

E -ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է.

բ. սակագինը՝ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝ ամսական մինչև 10 000 խորանարդ մետր

սպառման դեպքում՝ սույն կետի 1-ին ենթակետով սահմանված սակագնին հավասար, իսկ ամսական 10 000 խորանարդ մետր և ավելի սպառման դեպքում՝ սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված բանաձևի համաձայն հաշվարկվող սակագնին հավասար.

3) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող կազմակերպություններին վաճառվող յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$P_{\text{գ}}=212 * E,$$

որտեղ՝

$P_{\text{գ}}$ -ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող կազմակերպություններին վաճառվող բնական գազի՝ յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/1000 խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) ամսական 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող սպառողներին, բացառությամբ սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված սպառողների, վաճառվող յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$P=242,1 * E,$$

որտեղ՝

P -ն 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող սպառողներին վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/1000 խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 1-ի «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 10-ի N 35Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 31Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄՄԱՆՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2016 թվականի դեկտեմբերի 13-ին
Պետական գրանցման համարը 3011690

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 նոյեմբերի 2016 թվական

N 30-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N18-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի մարտի 31-ի ««Ոչ ֆինանսական ակտիվներում իրականացված ներդրումների մասին» Ձև թիվ 1-ՆԵՐԴՐՈՒՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N 19-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N18-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ում «մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հուլիսի 20-ը» բառերը փոխարինել «մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա ապրիլի 15-ը» բառերով:

ՆԱԽԱԳԱՀ՝

Կ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2016 թվականի դեկտեմբերի 9-ին
պետական գրանցման համարը 1101689

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» նոյեմբերի 2016 թվական

N 662-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ
ԳՈՎԱԳՂԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան և հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի տեղադրման կարգը հաստատելու մասին» N 380 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի «բ» ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի տեղադրման թույլտվության ձևը` համաձայն հավելվածի:

2. Մույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ճանապարհաշինության քաղաքականության բաժնին:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման և վարչատնտեսական բաժնի պետին` սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն` պետական գրանցման:

4. Մույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ. ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
քաղաքաշինության նախարարի
2016 թվականի նոյեմբերի 30-ի N 662-Ն հրամանի

Ձև

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

/քաղաք, շրջան/

ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N _____

« _____ » _____ 20 թ.

Տրված է -----

/ֆիզիկական անձի ազգանուն, անուն, իրավաբանական անձի անվանում, հասցե/

Գովազդի տեղադրման վայրը -----

/ճանապարհի անվանում, տեղամաս/

Պահանջվող փաստաթղթերը -----

/փաստաթղթերի առկայություն/

Գովազդի տեղադրման վայրի զննությունը կատարվել է -----

կողմից

/ստորաբաժանման անվանում, զննություն կատարող անձի /անձանց/, պաշտոն/ներ/, անուն/ներ/, ազգանուն/ներ/

----- **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարար**

/ստորագրություն/

/պաշտոն/

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2016 թվականի դեկտեմբերի 13-ին
պետական գրանցման համարը 2061691

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՆԹԵՐ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» դեկտեմբերի 2016թ.

N 46-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌՈՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N 30-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր
շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի 2016 թվականի
հուլիսի 5-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում որսի
կենդանիների 2016-2017 թվականների սիրողական որսի համար թույլատրելի
չափաքանակները և որսի ժամկետները սահմանելու մասին» N 30-Ն հրամանով
սահմանված հավելվածի՝

1) 2-րդ կետում «2017» թիվը փոխարինել «2016» թվով.

2) 9-14-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 9. Ծածան – մինչև 900 կիլոգրամ, 2016 թվականի հուլիսի 24-ից 2017 թվականի
ապրիլի 20-ը:

10. Կողակ – մինչև 2800 կիլոգրամ, 2016 թվականի հուլիսի 24-ից 2017 թվականի
ապրիլի 20-ը:

11. Կարաս – մինչև 4200 կիլոգրամ, 2016 թվականի հուլիսի 24-ից 2017
թվականի ապրիլի 20-ը:

12. Մուրցա – մինչև 420 կիլոգրամ, 2016 թվականի հուլիսի 24-ից 2017 թվականի
ապրիլի 20-ը:

13. Կարմրախայտ – մինչև 155 կիլոգրամ, 2016 թվականի հուլիսի 24-ից
նոյեմբերի 1-ը, 2017 թվականի հունվարի 1-ից հունիսի 15-ը:

14. Խեցգետին – մինչև 700 կիլոգրամ, 2016 թվականի հուլիսի 24-ից 2017
թվականի ապրիլի 20-ը:»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի

N 45Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 31-Ի N 10Ա ՈՐՈՇՄԱՄԲ «ԾՈՎԻՆԱՐ-ՆԱՐԵԿ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ N 0005
ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի մարտի 31-ի ««Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ակունք» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» N 10Ա որոշմամբ տրված N 0005 լիցենզիան:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԳԱՀՐԱՍԱՆՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի

N 46Ա

ք. Ստեփանակերտ

**«ԾՈՎԻՆԱՐ-ՆԱՐԵԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԱԿՈՒՆՔ» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՅԱՆՈՒՄ
ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԳԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էներգետիկայի մասին» Լեռնային Գարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետին, 17-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածներին և Լեռնային Գարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Գարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Գարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Գարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Լեռնային Գարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի Շրվական գյուղի տարածքում՝ Սպիտակաջուր գետի վրա՝ «Ակունք» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ 15 տարի գործողության ժամկետով:

2. Սահմանել «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Ակունք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԳԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Սահմանված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2016 թվականի նոյեմբերի 24-ի N 46Ա որոշմամբ

**«ԾՈՎԻՆԱՐ-ՆԱՐԵԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ «ԱԿՈՒՆՔ» ՓՈՔԻ ՀԻԳԻՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ**

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

(Լիցենզիա N 0007, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 46Ա որոշմամբ)

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից
«Ակունք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտա-
դրության լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմաններում (այսուհետ՝
Լիցենզիայի պայմաններ) օգտագործված որոշ հասկացություններ սահմանվում են
հետևյալ կերպ.

Հանձնաժողով - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները
և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

Լիցենզիա - Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձին տրված փաստաթուղթ, որը
հավաստում է էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով էլեկտրական
էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու իրավունք.

Լիցենզավորված անձ - «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն.

Սպառող - Էլեկտրական էներգիայի (հզորության), բնական գազի կամ ջերմային
էներգիայի սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ
իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որն էներգիայի
մատակարարման պայմանագիր է կնքել Լիցենզավորված անձի հետ.

Հաղորդող - Էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման Լիցենզիա ստացած
իրավաբանական անձ.

Բաշխող - Էլեկտրաէներգիայի (հզորության) բաշխման Լիցենզիա ստացած
իրավաբանական անձ.

Արտադրող - Էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության Լիցենզիա ունեցող
իրավաբանական անձ.

Ներկրող - Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն էլեկտրական էներգիա
(հզորություն) ներկրելու Լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Արտահանող - Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից էլեկտրաէներգիայի
(հզորության) արտահանման Լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Տնօր-մատր - Արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են
Լիցենզավորված անձի կամ քից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով)
բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դուրսորումները, ինչպես, օրինակ,
ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային
գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, սպառամբություններ,
հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված
անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության
կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝
խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Լիցենզիան ուժի մեջ է մտնում այն լիցենզավորված անձին հանձնելու օրվան
հաջորդող օրվանից:

2. Լիցենզիան գործում է 15 տարի ժամկետով:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3. Լիցենզիայով իրավունք է տրվում «ԾՈՎԻՆԱՐ-ՆԱՐԵԿ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության «Ակունք» փոքր հիդրոէլեկտրակայանում
(այսուհետ՝ նաև ՓՀԷԿ)՝ սահմանված կարգով իրեն արտոնված հողատարածքում,
իրականացնելու էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված
գործունեություն:

**4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԷՆԵՐԳԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐ**

4. Լիցենզավորված անձը «Ակունք» ՓՀԷԿ-ում լիցենզավորված գործունեությունն իրականացնում է 2016 թվականին շահագործման հանձնված ՀԱ-1 հիդրոագրեգատով, որի դրվածքային հզորությունը կազմում է 55 կիլովատտ:

**5. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

5. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում իրականացնելու էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն, փոխակերպում (տրանսֆորմացիա), առաքում (վաճառք) և դրանց իրականացման համար անհրաժեշտ էներգատեղակայանքների շահագործում՝ սույն Լիցենզիայի պայմաններին համապատասխան:

6. Լիցենզավորված անձը Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և (կամ) պարտականություն իրավունք չունի պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ փոխանցելու մեկ այլ անձի՝ առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու և Լիցենզիայում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու:

6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին:

8. Լիցենզավորված անձը Լիցենզավորված գործունեությունը պետք է իրականացնի տնտեսական արդյունավետության սկզբունքներին, ստանդարտներին, անվտանգության տեխնիկայի նորմերին և հուսալիության ցուցանիշներին համապատասխան:

9. Լիցենզավորված անձը չպետք է խոչընդոտի կամ փորձի խոչընդոտել այլ լիցենզավորված անձանց՝ Արտադրողի կամ Ներկրողի (Արտահանողի) գործունեությունը և (կամ) մրցակցությունը գործունեության այդ բնագավառներում:

10. Լիցենզավորված անձն իր գործունեությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունը, ինչպես նաև գույքի պահպանությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

11. Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտտեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

12. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտտերն առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերելու նույն կամ մեկ այլ Լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալու փայմանակցություն, ինչպես նաև վաճառելու 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

13. Լիցենզավորված անձի և Լիցենզիա ունեցող այլ անձանց, ինչպես նաև Սպառողների հետ կնքվող էներգամատակարարման (առուվաճառքի) պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին:

14. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող այլ անձանց միջև կնքվող էներգամատակարարման (առուվաճառքի) պայմանագրերը ենթակա են Հանձնաժողովում գրանցման:

15. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և զծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով:

16. Լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան տեղեկատվություններ և հաշվետվություններ, ինչպես նաև տեղեկատվություններ՝

- 1) բանկերում ունեցած հաշիվների մասին,
- 2) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքների մասին,
- 3) անցած ժամանակաշրջանի գործունեության մասին,
- 4) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,
- 5) երկարաժամկետ և կարճաժամկետ վարկային ծրագրերի մասին,
- 6) տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսատնտեսական ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապատասխան հաշվարկներով և ենթակա են Հանձնաժողովի հետ համաձայնեցման:

17. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին (ստանդարտներին) և Հանձնաժողովի սահմանած ձևերին:

18. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվությունից:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 30-ը, հանրապետական մամուլում հրապարակել նախորդ տարվա իր գործունեության ֆինանսատնտեսական հաշվետվությունը՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերի: Հրապարակված հաշվետվությունները չպետք է պարունակեն պետական և ծառայողական գաղտնիքներ:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով իրականացնել իր ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ:

21. Լիցենզավորված անձը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

22. Լիցենզիայի գործողության ընթացքում Լիցենզավորված անձն իր նախաձեռնությամբ, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, կարող է հայտ ներկայացնել գործող սակագների վերանայման վերաբերյալ:

23. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ և իր սահմանած ընթացակարգով կարող է վերանայել գործող սակագները:

24. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեության հետ կապված ծախսերն իրականացնում է ըստ սակագնի մեջ ընդգրկված ծախսերի համապատասխան հոդվածների (ուղղությունների)՝ ապահովելով շահագործման հուսալիությունն ու անվտանգությունը: Ծախսերի կառուցվածքի փոփոխության անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը համապատասխան հիմնավորումներով նախապես դիմում է Հանձնաժողով՝ համաձայնեցման համար:

25. Հանձնաժողովը սակագների մեջ հաշվի է առնում միայն այն ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար:

26. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Հաղորդողի, Բաշխողի և Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները և կարգադրությունները՝ ըստ գործող կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

27. Լիցենզավորված անձը պարտավոր է անմիջապես Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՄ

28. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը Հանձնաժողովն իրականացնում է իր կողմից սահմանված կարգով:

29. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

30. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

31. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, անվտանգության և հակահրդեհային կանոնները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒՅԺԵՐ

32. Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովը ղեկավարվում է «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով:

33. Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

34. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելը Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել իրականացնել գործունեությունը՝

ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և համաձայն Լիցենզիայի պայմանների:

35. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության սույն Լիցենզիայի պայմանների 32-րդ կետով սահմանված կարգով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս-մաժորային հանգամանքների հետևանք են:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

36. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

37. Լիցենզավորված անձի իրավական-կազմակերպական ցանկացած փոփոխության դեպքում նա պարտավոր է Լիցենզիայի վերագրանցման կամ նրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու կամ նոր Լիցենզիա ստանալու հայտով անհապաղ դիմել Հանձնաժողով:

38. Լիցենզավորված անձը հնգօրյա ժամկետում ծանուցագրով տեղեկացնում է Հանձնաժողովին իր իրավաբանական հասցեում, հիմնադիր փաստաթղթերում և բանկային հաշվեհամարներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

39. Լիցենզավորված անձի բաժնետերերի (հիմնադիրների) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է դիմել Հանձնաժողով՝ սույն Լիցենզիայում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:

40. Լիցենզավորված անձը վթարային և այլ իրավիճակներում, երբ սպառողների էներգամատակարարումը լրիվ կամ մասնակի դադարեցվել է, իսկ էլեկտրական էներգիայի քանակը (հզորությունը) նվազել է, պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր անհրաժեշտ միջոցները էներգամատակարարումը հնարավորինս սեղմ ժամկետներում վերականգնելու համար:

41. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող՝ էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող, Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննման իրականացմանը:

11. ԾԱՆՈՒՑՈՒՄ

42. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ կհամարվի ստացման պահից կամ, եթե այն չի ստացվել հասցեատիրոջ մեղքով, ներկայացման պահից:

**ԼԵՈՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի

N 48Ա

ք. Ստեփանակերտ

**«ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՋՐԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ, 38-րդ և 44-րդ հոդվածներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի ապրիլի 10-ի «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 20Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության հայտը և 25 տարի ժամկետով տրամադրել ջրային համակարգի օգտագործման թույլտվություն՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման համար:

2. Հաստատել «Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2016 թվականի նոյեմբերի 24-ի N 48Ա որոշմամբ

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր
«ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

(Թույլտվություն N 0001, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 48Ա որոշմամբ)

1. Թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացությունները

1. Սույն թույլտվության իմաստով օգտագործված հիմնական հասկացություններն են՝
Հանձնաժողով - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայու-
թյունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով:

Անձ - «Քարեկարգում» փակ բաժնետիրական ընկերություն:

Թույլտվություն - Հանձնաժողովի կողմից Անձին տրված սույն փաստաթուղթը, որը
հավաստում է նրա իրավունքը և պարտականությունը սույն Թույլտվության մեջ
ամրագրված պայմաններով օգտագործելու ջրային համակարգը՝ սույն Թույլտվության 5-րդ
կետով նշված ծառայությունների մատուցման համար:

Ջրային համակարգ - Թույլտվության պայմանների կատարման համար անհրաժեշտ
հիդրոտեխնիկական կառուցվածքներ և այլ ինժեներական կառույցներ, որոնք գտնվում են
Անձի տնօրինման կամ տիրապետման տակ:

Սպառող (Բաժանորդ) - իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ իրավաբանական
անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որը Անձի հետ կնքել է խմելու ջրի
մատակարարման և ջրահեռացման կամ միայն խմելու ջրի մատակարարման կամ միայն
ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագիր:

Չորս-մաժոր - արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել
են Անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական
աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ,
ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև սաբոտաժային
գործողություններ, ահաբեկություններ, պատերազմներ, ապստամբություններ,
հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Անձի
գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության
կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա գործադրած ջանքերի՝
խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում այն Անձին հանձնելու օրվան հաջորդող
օրվանից:

3. Թույլտվությունը տրվում է 25 տարի ժամկետով:

3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾԸ

4. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Անձին իրավունք է տրվում և
պարտավորեցվում է իր գործունեությունն իրականացնել Թույլտվության ենթահավելվածում
նշված տարածքում:

**4. ԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԳՐԱՆՑ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՈՈՒՅԹՆԵՐԸ**

5. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Անձին իրավունք է տրվում և պարտա-
վորեցվում է Թույլտվության 3-րդ կետում սահմանված ժամկետում ենթահավելվածում
նշված տարածքում իրականացնել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման
ծառայություններ, որոնք ներառում են հետևյալ գործառնությունները՝

1) խմելու ջրի արդյունահանում, ջրառ, մշակում, տեղափոխում,

2) խմելու ջրի բաշխման (մատակարարման), ջրահեռացման ծառայությունների
մատուցում Սպառողներին,

3) սահմանված օրինակելի ձևերին համապատասխան՝ խմելու ջրի մատակարարման և
ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում,

4) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման
դիմաց գումարների գանձում,

5) Ջրային համակարգի կառավարում, շահագործում, պահպանում, բարելավում և
ընդլայնում:

6. Անձը պարտավոր է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցել բոլոր այն Սպառողներին, որոնց ներքին ցանցը տեխնիկական միացում ունի Անձի Ջրային համակարգին, և որոնք Անձի հետ կնքել են խմելու ջրի մատակարարման կամ ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրեր:

5. ԱՆՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքին, Թույլտվությանը, դրան առնչվող իրավական ակտերին (ներառյալ՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնները) և Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին համապատասխան:

8. Անձն իրավունք չունի Թույլտվությունը և դրան առնչվող իրավունքներն ու պարտականությունները վաճառելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

9. Անձն իրավունք չունի Ջրային համակարգը կամ նրա մի մասը հանձնելու անհատույց կամ հատուցելի օգտագործման՝ բացառությամբ Թույլտվության 10-րդ կետով նախատեսված դեպքի:

10. Անձը տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում պարտավոր է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման նպատակով սահմանված կարգով թույլատրել միանալ Ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել օգտագործումը, եթե այն չի վտանգում ջրամատակարարման գործընթացը, չի հանգեցնում Թույլտվության պայմանների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ ջրի որակի նկատմամբ սահմանված պահանջների խախտման կամ ջրի քանակի նվազեցման: Ջրային համակարգին միանալու կամ Ջրային համակարգը օգտագործելու համար Անձի կողմից գանձվող վճարը չի կարող գերազանցել այդ օգտագործման հետևանքով նրա մոտ առաջացող լրացուցիչ ծախսերը:

Անձը փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման նպատակով Ջրային համակարգին միանալու կամ Ջրային համակարգը օգտագործելու թույլտվություն տալու դեպքում պարտավոր է 30-օրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

11. Անձի կողմից այլ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության իրականացումը չպետք է վտանգի Թույլտվության պայմանների պատշաճ կատարումը:

12. Անձի և Սպառողների փոխհարաբերությունները կարգավորվում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերով, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոններով, օրենքներով և այլ իրավական ակտերով:

13. Անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ և Հանձնաժողովի կողմից այլ իրավական ակտերով սահմանված՝ Սպառողներին մատուցվող ծառայությունների որակին (սպասարկման որակին) ներկայացվող պահանջների կատարումը:

14. Անձը պարտավոր է ապահովել մատակարարված ջրի որակը սանիտարական և հակահամաճարակային կանոնների ու նորմերի, ջրի որակին առնչվող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

15. Անձը պարտավոր է Ջրային համակարգի նորոգումների, ընդլայնման աշխատանքների իրականացումից հետո վերականգնել կամ բարեկարգել վնասված տարածքը և առնվազն բերել նախկին տեսքին՝ պլանային նորոգումների (աշխատանքների) դեպքում Անձի հաստատած պլան-գրաֆիկով սահմանված ժամկետում, իսկ բնակլիմայական անբարենպաստ պայմանների դեպքում՝ հնարավորինս սեղմ ժամկետներում, արտապլանային նորոգումների (աշխատանքների) դեպքում՝ 15-օրյա ժամկետում:

16. Անձը պարտավոր է իր տարածքային ստորաբաժանումներում ապահովել շուրջօրյա հեռախոսակապ, որի միջոցով Սպառողները կարող են անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ կամ հաղորդել: Անձը պարտավոր է շուրջօրյա հեռախոսահամարի մասին մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով տեղեկացնել Սպառողներին:

17. Անձը պարտավոր է ունենալ վթարային ծառայություն և ձեռնարկել համապատասխան միջոցներ վթարների կանխարգելման կամ վերացման ուղղությամբ:

18. Անձը պարտավոր է պահպանել հակահրդեհային նպատակներով ջրի պաշարների ապահովմանն ուղղված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

19. Անձը պարտավոր է միջոցներ ձեռնարկել Ջրային համակարգում տեղի ունեցող ջրակորուստները կանխարգելելու և կրճատելու ուղղությամբ:

20. Անձը պարտավոր է Սպառողի հարցման դեպքում վերջինիս իրագրել նրա իրավունքների և պարտականությունների մասին, որոնք առնչվում են Թույլտվությանը, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոններին, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերին և սպասարկման որակի պահանջներին:

21. Անձը պարտավոր է սահմանված կարգով և ժամկետում Սպառողներին ներկայացնել մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի վերաբերյալ փաստաթուղթ:

22. Անձը պարտավոր է գրանցել Սպառողների դիմում-բողոքները, հարցադրումները և գրավոր պատասխանել ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում:

23. Անձը պարտավոր է սահմանված կարգով նոր սպառողներին տրամադրել իր Ջրային համակարգին միանալու տեխնիկական պայմանները, նոր սպառողների ներքին ցանցը Ջրային համակարգին միանալու աշխատանքներն ավարտելուց հետո ստուգել միացման համապատասխանությունը, կնքել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագիր և մատուցել Թույլտվության 5-րդ կետում նշված ծառայությունները:

24. Անձի և ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց, Անձի և համայնքների միջև կնքված մեծածախ ջրամատակարարման կամ մեծածախ ջրահեռացման, կամ կեղտաջրերի մաքրման պայմանագրերը մինչև կնքելը ներկայացվում են Հանձնաժողովի համաձայնեցմանը:

25. Անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, իր գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով:

26. Անձը պարտավոր է հաշվառել վթարները և դրանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան:

27. Անձը պարտավոր է հաշվառել ստացված դիմում-բողոքները (ներառյալ՝ հեռախոսագրանգերը, էլեկտրոնային փոստով ստացված հաղորդագրությունները), հարցադրումները և Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերին ու կարգին համապատասխան հաշվետվություններ ներկայացնել դրանց վերաբերյալ:

28. Անձի գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները պետք է համապատասխանեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:

29. Անձը պարտավոր է վարել Թույլտվության հետ կապված գործունեության առանձնացված հաշվապահական հաշվառում:

30. Անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

31. Անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հունիսի 30-ը, մամուլում հրապարակել նախորդ տարվա իր ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

32. Այն դեպքերում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Սպառողի դիմում-բողոք կամ հարցադրում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Անձի կողմից ներկայացված որևէ հայտ կամ հարցադրում, Հանձնաժողովի վարչական վարույթի ներքո գտնվող որևէ գործ, սպա Անձը Հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

33. Անձի՝ Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «Անձին վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Անձն իրավունք ունի ներկայացնելու փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «Անձին վերաբերող գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Անձի խնդրանքը:

34. Անձն իր գործունեությունն իրականացնելիս, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, պարտավոր է ապահովել քաղաքացիների, սպասարակող անձնակազմի կյանքի, առողջության և գույքի անվտանգությունը:

35. Անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը):

36. Անձը պարտավոր է իրականացվելիք ներդրումային ծրագրերը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել վերջինիս համաձայնեցմանը՝ ապագա սակագներում (լրիվ կամ մասնակի) ներառելու կամ մերժելու նպատակով:

37. Թույլտվության ենթահավելվածում նշված տարածքից դուրս նոր ջրային համակարգի շինարարության կամ Ջրային համակարգի ընդլայնման դեպքում Անձը պարտավոր է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի, Հանձնաժողովի կողմից սահմանված ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգի համաձայն ստանալ ջրային համակարգի օգտագործման թույլտվություն:

38. Անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

39. Անձի կողմից խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները սահմանում է Հանձնաժողովը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքին և Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին համապատասխան:

40. Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես Անձի, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքին և Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին համապատասխան:

41. Անձը պարտավոր է իր կողմից մշակված սակագնի տարր կազմող մեծությունների հաշվարկման մեթոդիկաները ներկայացնել Հանձնաժողովի հաստատմանը՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված ցանկով և ժամանակացույցով:

6. ԱՆՁԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

42. Անձի գործադիր (գլխավոր) տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն և խմելու ջրի մատակարարման կամ ջրահեռացման, կամ կեղտաջրերի մաքրման, կամ ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների կամ դրանց տարածքային ստորաբաժանումներից որևէ մեկի ղեկավար պաշտոններում կամ ջրային համակարգին առնչվող պետական կառավարման մարմիններում վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 1 տարվա աշխատանքային ստաժ:

43. Գործադիր (գլխավոր) տնօրենի առևտրային գծով տեղակալը (առևտրային գծով տնօրենը) պետք է ունենա տնտեսագիտական գծով բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում ղեկավար պաշտոններում առնվազն 1 տարվա աշխատանքային ստաժ:

44. Գործադիր (գլխավոր) տնօրենի տեխնիկական գծով տեղակալը (տեխնիկական գծով տնօրենը) պետք է ունենա բարձրագույն տեխնիկական կրթություն և ջրամատակարարման կամ ջրահեռացման ոլորտում ծառայություններ մատուցող որևէ ընկերության ղեկավար պաշտոններում կամ ջրային համակարգին առնչվող պետական կառավարման մարմիններում վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 1 տարվա աշխատանքային ստաժ:

45. Անձի գործադիր (գլխավոր) տնօրենի մյուս տեղակալները (տնօրենները) պետք է ունենան բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում իրավաբանական ասնձանց գործադիր մարմիններում կամ պետական կառավարման մարմիններում առնվազն 1 տարվա համապատասխան աշխատանքային ստաժ:

7. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄ

46. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

47. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կամ նրա լիազորած ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործելու Անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Անձը պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա լիազորած ներկայացուցիչներին:

48. Հանձնաժողովի լիազորած ներկայացուցիչներն Անձի տարածքում պահպանում են Անձի ներքին կանոնակարգը, անվտանգության և հակահրդեհային կանոնները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

49. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իր ներկայացուցիչների միջոցով, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների հավաստիության ստուգում:

8. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

50. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի, Թույլտվության պայմանների խախտման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Հանձնաժողովն իրավասու է կիրառելու Թույլտվության պայմանների պահպանումն ապահովող հետևյալ միջոցները՝

- 1) նախազգուշացում,
- 2) թույլտվության կասեցում,
- 3) թույլտվությունից զրկում:

51. Թույլտվության պայմանների պահպանումն ապահովող միջոցների կիրառման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

52. Թույլտվության 50-րդ կետում նշված պահպանումն ապահովող միջոցների կիրառումն Անձին չի ազատում օրենքների կամ այլ իրավական ակտերի, կամ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերի խախտման համար պարտավորություններից և պատասխանատվությունից:

53. Անձի նկատմամբ Թույլտվության պայմանների պահպանումն ապահովող միջոցները չեն կիրառվում, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

9. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

54. Թույլտվության մեջ փոփոխությունները կատարվում են ինչպես Հանձնաժողովի, այնպես էլ Անձի նախաձեռնությամբ:

55. Անձի նախաձեռնությամբ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու համար Անձը պարտավոր է հայտ ներկայացնել, որն ընդունվում և քննարկվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

56. Հանձնաժողովի նախաձեռնությամբ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարվում են Անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող

փոփոխություններն անհրաժեշտ են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

57. Թույլտվության գործողության ժամկետը երկարաձգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի և Հանձնաժողովի սահմանած կարգի համաձայն:

58. Եթե Անձը չի ցանկանում ունենալ Թույլտվությունը, ապա նա պարտավոր է գրավոր տեղյակ պահել Հանձնաժողովին, վերջինիս ներկայացնել Թույլտվության բնօրինակը, ինչը հիմք է Թույլտվության գործողությունը դադարեցնելու համար:

59. Թույլտվության կասեցման, Թույլտվությունից զրկելու կամ Թույլտվության 58-րդ կետում նշված՝ Անձի ներկայացրած գրության հիման վրա Հանձնաժողովի կողմից Թույլտվության գործողությունը դադարեցնելու դեպքում Սպառողներին անխափան ծառայությունների մատուցման ապահովման նպատակով Անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանների համաձայն շարունակել մատուցել Թույլտվության 5-րդ կետում նշված ծառայությունները մինչև Հանձնաժողովի կողմից այլ անձի կամ անձանց Թույլտվության ենթահավելվածում նշված տարածքում ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելը (ուժի մեջ մտնելը):

10. ԾԱՆՈՒՑՈՒՄ

60. Թույլտվության վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ տեղեկատվությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով՝ պահանջելով ստացական: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ է համարվում ստացման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՄԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ենթահավելված

Գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը

Անձի գործունեության աշխարհագրական տարածքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Շուշի քաղաքի և Քարին տակ համայնքների տարածքներն են:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՄԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի

N 51Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՄԻ 17-Ի ԹԻՎ 45Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՐԻՆԵ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ ԱՆՀԱՏ ՉԵՈՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ
ՏՐԱՍՄԱԴՐՎԱԾ N 0023 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լիցենզավորման մասին» Լեռնային Գարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Գարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով Մարինե Հախնազարյան անհատ ձեռնակատիրոջ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի դիմումը՝ Լեռնային Գարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Գարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 17-ի թիվ 45Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշումից հանել «ՄԱՐԻՆԵ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ», «Մարինե Հախնազարյան», «159,500 ՄՀց» բառերը և թվերը.

2) ուժը կորցրած ճանաչել որոշմամբ հաստատված թիվ 19 հավելվածը և այդ որոշմամբ տրամադրված N 0023 թույլտվությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԳԱՀՐԱՄԱՆՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 53Ա

ք. Ստեփանակերտ

**«ՍԱՀՄԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՍԱՀՄԱՆ» ՓՈԲՐ ՀԻԴՐՈՒԼԵԿԿՏՐԱԿԱՅԱՆԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ N 0003 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Երկարաձգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 12-ի «Սահման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սահման» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» N 6Ա որոշմամբ «Սահման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման N 0003 լիցենզիայի գործողության ժամկետը՝ մինչև 2017 թվականի նոյեմբերի 21-ը:

2. «Սահման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ N 0003 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) երկշաբաթյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի փետրվարի 5-ի N 652-728 գրությամբ ՇԲԵՆ16/04-38 երաշխիքի համաձայն երաշխավորված ինը հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր դրամ երաշխիքային գումարից չորս հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր հիսուն դրամը փոխանցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե և փոխանցումը հավաստող փաստաթղթի բնօրինակը երկշաբաթյա ժամկետում ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով:

2) մեկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով ներկայացնել ինը հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 21-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Սահման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՍԱՆՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 54U

ք. Ստեփանակերտ

**«ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՁԻ ԻՆՎԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԳԵՏԱՎԱՆ» ՓՈԲԸ ՀԻՂԻՐՈՒԼԵԿԿՏՐԱՎԱՅԱՆԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԳԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետին, 17-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՁԻ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Գետավան, Ջարդախաչ և Հաթերք համայնքների վարչական տարածքներում՝ Թարթառ գետի 801 մետրից 727 մետր գետահատվածքների միջև, «ԳԵՏԱՎԱՆ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՁԻ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «ԳԵՏԱՎԱՆ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՁԻ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 54Ա որոշմամբ

**«ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ ԻՆՎԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՄԻՆԱՆՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԳԵՏԱՎԱՆ» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ**

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**(Լիցենզիա N 0008, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 54Ա որոշմամբ)**

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «ԳԵՏԱՎԱՆ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմաններում (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) մեծատառով գրված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.

Էներգետիկայի բնագավառ՝ հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այլ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբ.

Հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

Փոքր հիդրոէլեկտրակայան (ՀԷԿ)՝ մինչև 10000 կՎտ տեղակայված հզորությամբ հիդրոէլեկտրակայան.

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով որոշակի գործունեություն իրականացնելու իրավունքը և պարտականությունը.

Լիցենզավորված անձ՝ «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

Ֆորս-մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սարսափաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Սույն Լիցենզիան ուժի մեջ է մտնում այն Լիցենզավորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն Լիցենզիան գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում կառուցել 9,865 ՄՎտ դրվածքային հզորությամբ «ԳԵՏԱՎԱՆ» Փոքր հիդրոէլեկտրակայանը:

4. Փոքր ՀԷԿ-ի կառուցման տարածքը և տեխնիկատնտեսական ցուցանիշները հատկորոշվում են Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված «Գործարար ծրագիր» փաստաթղթով և սույն Լիցենզիայով:

5. Հանձնաժողովը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակում չլիազորել մեկ այլ անձի էներգետիկայի բնագավառում իրականացնելու այնպիսի գործունեություն, որը կարող է հանգեցնել սույն Լիցենզիայով կառուցվող Փոքր ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական ցուցանիշների վատացմանը:

6. Լիցենզավորված գործունեությունը պետք է համապատասխանի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը, Հանձնաժողովի կողմից սահմանված ու այլ իրավական ակտերին և սույն Լիցենզիայի պայմաններին:

7. Լիցենզավորված անձը առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

8. Լիցենզավորված անձի կանոնադրական հիմնադրամում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերելու նույն կամ մեկ այլ Լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալու փայտասնակցություն, ինչպես նաև վաճառելու 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

9. Լիցենզավորված անձն անմիջապես Հանձնաժողով է հայտնում սույն Լիցենզիայի պայմանների խախտումների, ինչպես նաև խախտումների հանգեցնող հանգամանքների մասին:

10. Իրավասու մարմինների կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում արձանագրված խախտումների մասին Լիցենզավորված անձը տասնօրյա ժամկետում տեղեկացնում է Հանձնաժողովին:

11. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է՝ պահպանելով աշխատանքների ժամանակացույցը, և Լիցենզիա ստանալուց հետո՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո քսանհինգօրյա ժամկետում, հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով՝ Փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքների վերաբերյալ:

12. Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով:

13. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտներին և Հանձնաժողովի պահանջներին:

14. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվություններից:

15. Լիցենզավորված անձը ներկայացնում է լիցենզավորված գործունեությանն առնչվող ցանկացած տեղեկություն, որը կպահանջի Հանձնաժողովն իր կողմից սահմանված ժամկետներում և ձևերին համապատասխան:

16. Հանձնաժողովի պահանջով Լիցենզավորված անձն իրականացնում է լիցենզավորված գործունեության տեխնիկական և (կամ) ֆինանսական ատոլիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ, և եզրակացությունը ներկայացնում Հանձնաժողով:

17. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել էլեկտրակայանի կարգաբերման-թողարկման աշխատանքներ՝ համաձայն նախագծի, սարքավորումներ արտադրող գործարանների և տեխնիկական կանոնակարգերի պահանջների: Նա պարտավոր է այդ աշխատանքներն սկսելուց առնվազն տաս օր առաջ տեղյակ պահել Հանձնաժողովին: Կարգաբերման-թողարկման աշխատանքների արդյունքում հաղորդման կամ բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան պայմանագրով, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հանձնաժողովը, և որը ենթակա է Հանձնաժողովում գրանցման:

18. Հանձնաժողովի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգում և ձևերում փոփոխություններ կատարելու դեպքում Հանձնաժողովն այդ մասին ծանուցում է Լիցենզավորված անձին՝ նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

19. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը սահմանված կարգով Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

20. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովն՝ իր կողմից սահմանված կարգով:

21. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

22. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչին:

5. ՏՈՒՅԺԵՐ

23. «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքերում

ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով՝ Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել հետևյալ տույժերը.

1) նախազուշացում,

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ,

3) Լիցենզիայի գործողության կասեցում,

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

24. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

25. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության սույն Լիցենզիայի պայմանների 23-րդ կետով սահմանված տույժերով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս-մաժորային հանգամանքների հետևանք են:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

26. Լիցենզավորված իրավաբանական անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15 օրվա ժամկետում, հայտ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման համար՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

27. Կառուցման ընթացքում Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձն անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ ներկայացված փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

28. Սույն Լիցենզիայում, ինչպես նաև Լիցենզավորված անձի կողմից ներկայացված ծրագրերում, ժամանակացույցներում և այլ փաստաթղթերում կարող են փոփոխություններ կատարվել թե՛ Հանձնաժողովի և թե՛ Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՋՆԵՐ

29. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների վերադարձման ընթացակարգը կարգավորվում է Հանձնաժողովի կողմից հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

30. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան 2017 թվականի սեպտեմբերի 30-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «ԳԵՏԱՎԱՆ» Փոքր հիդրոէլեկտրակայանի՝ տեխնիկական և բնապահպանական փորձաքննություն անցած նախագիծը և ներդրումների իրականացման ժամանակացույցը:

31. Սույն Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է սույն Լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

9. ԾԱՆՈՒՑՈՒՄ

32. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՍՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 55Ա

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԹՐՂԻ-4»
ՓՈՔՐ ՀԻԳՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետին, 17-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի հյուսիսում՝ Միջնագետի և Ավազագետի միջին հոսանքներում՝ 1980 և Թրղի ՓՀԷԿ-երի կասկադի գլխամասային հանգույցի տեղամասում՝ 1720 միչերի հատվածում, «ԹՐՂԻ-4» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա՝ մինչև 2018 թվականի մայիսի 31-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից «ԹՐՂԻ-4» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՍԱՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 55Ա որոշմամբ

**«ԱՐԳԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«ԹՐՂԻ-4» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՑՄԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ**

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**(Լիցենզիա N 0009, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 55Ա որոշմամբ)**

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից «ԹՐՂԻ-4» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմաններում (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) մեծատառով գրված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.

Էներգետիկայի բնագավառը՝ հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբ.

Հանձնաժողովը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

Փոքր հիդրոէլեկտրակայան (ՀԷԿ)՝ մինչև 10000 կՎտ տեղակայված հզորությամբ հիդրոէլեկտրակայան.

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով որոշակի գործունեություն իրականացնելու իրավունքը և պարտականությունը.

Լիցենզավորված անձ՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն.

Ֆորս-մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սարսափաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Սույն Լիցենզիան ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
2. Սույն Լիցենզիան գործում է մինչև 2018 թվականի մայիսի 31-ը:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում կառուցել 0,82 ՄՎտ դրվածքային հզորությամբ «ԹՐՂԻ-4» Փոքր հիդրոէլեկտրակայանը:

4. Փոքր ՀԷԿ-ի կառուցման տարածքը և տեխնիկատնտեսական ցուցանիշները հատկորոշվում են Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված «Գործարար ծրագիր» փաստաթղթով և սույն Լիցենզիայով:

5. Հանձնաժողովը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակում չլիազորել մեկ այլ անձի էներգետիկայի բնագավառում իրականացնելու այնպիսի գործունեություն, որը

կարող է հանգեցնել սույն Լիցենզիայով կառուցվող Փոքր ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական ցուցանիշների վատացմանը:

6. Լիցենզավորված գործունեությունը պետք է համապատասխանի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը, Հանձնաժողովի կողմից սահմանված ու այլ իրավական ակտերին և սույն Լիցենզիայի պայմաններին:

7. Լիցենզավորված անձը առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

8. Լիցենզավորված անձի կանոնադրական հիմնադրամում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերելու նույն կամ մեկ այլ Լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալու փայտամասնակցություն, ինչպես նաև վաճառելու 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

9. Լիցենզավորված անձն անմիջապես Հանձնաժողով է հայտնում սույն Լիցենզիայի պայմանների խախտումների, ինչպես նաև խախտումների հանգեցնող հանգամանքների մասին:

10. Իրավասու մարմինների կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում արձանագրված խախտումների մասին Լիցենզավորված անձը տասնօրյա ժամկետում տեղեկացնում է Հանձնաժողովին:

11. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է՝ պահպանելով աշխատանքների ժամանակացույցը, և Լիցենզիա ստանալուց հետո՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո քսանհինգօրյա ժամկետում, հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով՝ Փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքների վերաբերյալ:

12. Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով:

13. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտներին և Հանձնաժողովի պահանջներին:

14. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվություններից:

15. Լիցենզավորված անձը ներկայացնում է լիցենզավորված գործունեությանն առնչվող ցանկացած տեղեկություն, որը կպահանջի Հանձնաժողովն իր կողմից սահմանված ժամկետներում և ձևերին համապատասխան:

16. Հանձնաժողովի պահանջով Լիցենզավորված անձը իրականացնում է լիցենզավորված գործունեության տեխնիկական և (կամ) ֆինանսական աուդիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ, և եզրակացությունը ներկայացնում Հանձնաժողով:

17. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել էլեկտրակայանի կարգաբերման-թողարկման աշխատանքներ՝ համաձայն նախագծի, սարքավորումներ արտադրող գործարանների և տեխնիկական կանոնակարգերի պահանջների: Նա պարտավոր է այդ աշխատանքներն սկսելուց առնվազն տաս օր առաջ տեղյակ պահել Հանձնաժողովին: Կարգաբերման-թողարկման աշխատանքների արդյունքում հաղորդման կամ բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան պայմանագրով, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հանձնաժողովը, և որը ենթակա է Հանձնաժողովում գրանցման:

18. Հանձնաժողովի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգում և ձևերում փոփոխություններ կատարելու դեպքում Հանձնաժողովն այդ մասին ծանուցում է Լիցենզավորված անձին՝ նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

19. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

20. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովն՝ իր կողմից սահմանված կարգով:

21. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

22. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչին:

5. ՏՈՒՅԺԵՐ

23. «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքերում, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով՝ Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել հետևյալ տույժերը.

1) նախազգուշացում,

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ,

3) Լիցենզիայի գործողության կասեցում,

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

24. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

25. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության սույն Լիցենզիայի պայմանների 23-րդ կետով սահմանված տույժերով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս-մաժորային հանգամանքների հետևանք են:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

26. Լիցենզավորված իրավաբանական անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15 օրվա ժամկետում, հայտ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման համար՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

27. Կառուցման ընթացքում Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատեսակական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձն անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ ներկայացված փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

28. Սույն Լիցենզիայում, ինչպես նաև Լիցենզավորված անձի կողմից ներկայացված ծրագրերում, ժամանակացույցներում և այլ փաստաթղթերում կարող են փոփոխություններ կատարվել թե Հանձնաժողովի և թե Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՋՆԵՐ

29. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների վերադարձման ընթացակարգը կարգավորվում է Հանձնաժողովի կողմից հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

30. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան 2017 թվականի հուլիսի 1-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «ԹՐՂԻ-4» Փոքր հիդրոէլեկտրակայանի՝ տեխնիկական և բնապահպանական փորձաքննություն անցած նախագիծը և ներդրումների իրականացման ժամանակացույցը:

31. Սույն Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է սույն Լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

9. ԾԱՆՈՒՑՈՒՄ

32. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 56Ա

ք. Ստեփանակերտ

**«ԿՈՆՏԻՆԵՆՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՀՈՉԱՆԳ-1» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԳԻԵԼՈՒ ՍԱՄԻՆ**

«Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետին, 17-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «ԿՈՆՏԻՆԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում՝ Մշենի և Հոչանց համայնքների տարածքում, «Հոչանց-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա՝ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել «ԿՈՆՏԻՆԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Հոչանց-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «ԿՈՆՏԻՆԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 56Ա որոշմամբ

**«ԿՈՆՏԻՆԵՆՏ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՏ «ՀՈՉԱՆԳ-1» ՓՈՔԻ ՀԻՂԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ**

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**(Լիցենզիա N 0010, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 56Ա որոշմամբ)**

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«ԿՈՆՏԻՆԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից
«Հոչանգ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզավորված գործունեություն
իրականացնելու պայմաններում (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) մեծատառով գրված
հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.

Էներգետիկայի բնագավառ՝ հասարակական ծառայություններ մատուցելու համար
էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված
արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման
(փոխադրման) ու բաշխման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների
համակարգերի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրաէներգետիկայի և
ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ
վերականգնման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի
ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման, էլեկտրական
էներգիայի և բնական գազի մերկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված
տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ
գործունեությունների իրականացման համար ամիրաժեշտ գույքի և էներգետիկական
շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբ.

Հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

Փոքր հիդրոէլեկտրակայան (ՀԷԿ)՝ մինչև 10000 կիլովատտ տեղակայված հզորությամբ
հիդրոէլեկտրակայան.

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթ, որը
հավաստում է Էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով որոշակի
գործունեություն իրականացնելու իրավունքը և պարտականությունը.

Լիցենզավորված անձ՝ «ԿՈՆՏԻՆԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն.

Ֆորս-մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել
են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով
դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները,
ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պատահողվերը, մաս
սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ,
սպասամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք
խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա
ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝
հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու
այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Սույն Լիցենզիան ուժի մեջ է մտնում այն Լիցենզավորված անձին հանձնելու օրվան
հաջորդող օրվանից:

2. Սույն Լիցենզիան գործում է մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և
պարտավորեցվում կառուցել 4.477 Մեգավատտ դրվածքային հզորությամբ «Հոչանգ-1»
Փոքր հիդրոէլեկտրակայանը:

4. Փոքր ՀԷԿ-ի կառուցման տարածքը և տեխնիկատնտեսական ցուցանիշները
հատկորոշվում են Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված
«Գործարար ծրագիր» փաստաթղթով և սույն Լիցենզիայով:

5. Հանձնաժողովը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակում չլիազորել մեկ
այլ անձի էներգետիկայի բնագավառում իրականացնելու այնպիսի գործունեություն, որը

կարող է հանգեցնել սույն Լիցենզիայով կառուցվող Փոքր ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական ցուցանիշների վատացմանը:

6. Լիցենզավորված գործունեությունը պետք է համապատասխանի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը, Հանձնաժողովի կողմից սահմանված ու այլ իրավական ակտերին և սույն Լիցենզիայի պայմաններին:

7. Լիցենզավորված անձը առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

8. Լիցենզավորված անձի կանոնադրական հիմնադրամում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերելու նույն կամ մեկ այլ Լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալու փայտամասնակցություն, ինչպես նաև վաճառելու 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

9. Լիցենզավորված անձն անմիջապես Հանձնաժողով է հայտնում սույն Լիցենզիայի պայմանների խախտումների, ինչպես նաև խախտումների հանգեցնող հանգամանքների մասին:

10. Իրավասու մարմինների կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում արձանագրված խախտումների մասին Լիցենզավորված անձը տասնօրյա ժամկետում տեղեկացնում է Հանձնաժողովին:

11. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է՝ պահպանելով աշխատանքների ժամանակացույցը, և Լիցենզիա ստանալուց հետո՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո քսանհինգօրյա ժամկետում, հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով՝ Փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքների վերաբերյալ:

12. Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով:

13. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտներին և Հանձնաժողովի պահանջներին:

14. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվություններից:

15. Լիցենզավորված անձը ներկայացնում է լիցենզավորված գործունեությանն առնչվող ցանկացած տեղեկություն, որը կպահանջի Հանձնաժողովն իր կողմից սահմանված ժամկետներում և ձևերին համապատասխան:

16. Հանձնաժողովի պահանջով Լիցենզավորված անձն իրականացնում է լիցենզավորված գործունեության տեխնիկական և (կամ) ֆինանսական աուդիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ, և եզրակացությունը ներկայացնում Հանձնաժողով:

17. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել էլեկտրակայանի կարգաբերման-թողարկման աշխատանքներ՝ համաձայն նախագծի, սարքավորումներ արտադրող գործարանների և տեխնիկական կանոնակարգերի պահանջների: Նա պարտավոր է այդ աշխատանքներն սկսելուց առնվազն տաս օր առաջ տեղյակ պահել Հանձնաժողովին: Կարգաբերման-թողարկման աշխատանքների արդյունքում հաղորդման կամ բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան պայմանագրով, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հանձնաժողովը, և որը ենթակա է Հանձնաժողովում գրանցման:

18. Հանձնաժողովի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգում և ձևերում փոփոխություններ կատարելու դեպքում Հանձնաժողովն այդ մասին ծանուցում է Լիցենզավորված անձին՝ նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

19. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

20. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովն՝ իր կողմից սահմանված կարգով:

21. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

22. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչին:

5. ՏՈՒՅԺԵՐ

23. «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքերում դեկլարավելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով՝ Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել հետևյալ տույժերը.

1) նախազգուշացում,

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ,

3) Լիցենզիայի գործողության կասեցում,

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

24. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

25. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության սույն Լիցենզիայի պայմանների 23-րդ կետով սահմանված տույժերով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս-մաժորային հանգամանքների հետևանք են:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

26. Լիցենզավորված իրավաբանական անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ տասնհինգ օրվա ժամկետում, հայտ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման համար՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

27. Կառուցման ընթացքում Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատեսակական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձն անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ ներկայացված փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

28. Սույն Լիցենզիայում, ինչպես նաև Լիցենզավորված անձի կողմից ներկայացված ծրագրերում, ժամանակացույցներում և այլ փաստաթղթերում կարող են փոփոխություններ կատարվել թե Հանձնաժողովի և թե Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՋՆԵՐ

29. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների վերադարձման ընթացակարգը կարգավորվում է Հանձնաժողովի կողմից հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերակազմման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

30. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան 2017 թվականի հունիսի 1-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «Հոչանց-1» Փոքր հիդրոէլեկտրակայանի՝ տեխնիկական և բնապահպանական փորձաքննություն անցած նախագիծը և ներդրումների իրականացման ժամանակացույցը:

31. Սույն Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է սույն Լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

9. ԾԱՆՈՒՑՈՒՄ

32. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՍՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 57Ա

ք. Ստեփանակերտ

**«ՀԱԿԱՐԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ՀԱԳԱՐԻ-2» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԳԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետին, 17-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում՝ Աղանուս և Ծաղկաբերդ համայնքների տարածքում, «Հագարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա՝ մինչև 2019 թվականի ապրիլի 1-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել «ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Հագարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 57Ա որոշմամբ

**«ՀԱԿԱՐԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ «ՀԱԿԱՐԻ-2» ՓՈՋՐ ՀԻՂԻՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՆԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ**

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**(Լիցենզիա N 0011, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 57Ա որոշմամբ)**

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմաններում (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) մեծատառով գրված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.

Էներգետիկայի բնագավառ՝ հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբ.

Հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

Փոքր հիդրոէլեկտրակայան (ՀԷԿ)՝ մինչև 10000 կիլովատտ տեղակայված հզորությամբ հիդրոէլեկտրակայան.

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով որոշակի գործունեություն իրականացնելու իրավունքը և պարտականությունը.

Լիցենզավորված անձ՝ «ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

Ֆորս-մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաքոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Սույն Լիցենզիան ուժի մեջ է մտնում այն Լիցենզավորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն Լիցենզիան գործում է մինչև 2019 թվականի ապրիլի 1-ը:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում կառուցել 6,21 Մեգավատտ դրվածքային հզորությամբ «Հազարի-2» Փոքր հիդրոէլեկտրակայանը:

4. Փոքր ՀԷԿ-ի կառուցման տարածքը և տեխնիկատնտեսական ցուցանիշները հատկորոշվում են Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված «Գործարար ծրագիր» փաստաթղթով և սույն Լիցենզիայով:

5. Հանձնաժողովը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակում չլիազորել մեկ այլ անձի էներգետիկայի բնագավառում իրականացնելու այնպիսի գործունեություն, որը կարող է հանգեցնել սույն Լիցենզիայով կառուցվող Փոքր ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական ցուցանիշների վատացմանը:

6. Լիցենզավորված գործունեությունը պետք է համապատասխանի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը, Հանձնաժողովի կողմից սահմանված ու այլ իրավական ակտերին և սույն Լիցենզիայի պայմաններին:

7. Լիցենզավորված անձը առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

8. Լիցենզավորված անձի կանոնադրական հիմնադրամում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերելու նույն կամ մեկ այլ Լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալու փայտասնակցություն, ինչպես նաև վաճառելու 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

9. Լիցենզավորված անձն անմիջապես Հանձնաժողով է հայտնում սույն Լիցենզիայի պայմանների խախտումների, ինչպես նաև խախտումների հանգեցնող հանգամանքների մասին:

10. Իրավասու մարմինների կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում արձանագրված խախտումների մասին Լիցենզավորված անձը տասնօրյա ժամկետում տեղեկացնում է Հանձնաժողովին:

11. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է՝ պահպանելով աշխատանքների ժամանակացույցը, և Լիցենզիա ստանալուց հետո՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո քսանհինգօրյա ժամկետում, հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով՝ Փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքների վերաբերյալ:

12. Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով:

13. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտներին և Հանձնաժողովի պահանջներին:

14. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվություններից:

15. Լիցենզավորված անձը ներկայացնում է լիցենզավորված գործունեությանն առնչվող ցանկացած տեղեկություն, որը կպահանջի Հանձնաժողովն իր կողմից սահմանված ժամկետներում և ձևերին համապատասխան:

16. Հանձնաժողովի պահանջով Լիցենզավորված անձն իրականացնում է լիցենզավորված գործունեության տեխնիկական և (կամ) ֆինանսական ատոլիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ, և եզրակացությունը ներկայացնում Հանձնաժողով:

17. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել էլեկտրակայանի կարգաբերման-թողարկման աշխատանքներ՝ համաձայն նախագծի, սարքավորումներ արտադրող գործարանների և տեխնիկական կանոնակարգերի պահանջների: Նա պարտավոր է այդ աշխատանքներն սկսելուց առնվազն տաս օր առաջ տեղյակ պահել Հանձնաժողովին: Կարգաբերման-թողարկման աշխատանքների արդյունքում հաղորդման կամ բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան պայմանագրով, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հանձնաժողովը, և որը ենթակա է Հանձնաժողովում գրանցման:

18. Հանձնաժողովի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգում և ձևերում փոփոխություններ կատարելու դեպքում Հանձնաժողովն այդ մասին ծանուցում է Լիցենզավորված անձին՝ նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

19. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

20. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովն՝ իր կողմից սահմանված կարգով:

21. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

22. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչին:

5. ՏՈՒՅԺԵՐ

23. «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքերում

ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով՝ Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել հետևյալ տույժերը.

- 1) նախազուշացում,
 - 2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ,
 - 3) Լիցենզիայի գործողության կասեցում,
 - 4) Լիցենզիայի գործողության դադարեցում:
24. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:
25. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության սույն Լիցենզիայի պայմանների 23-րդ կետով սահմանված տույժերով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս-մաժորային հանգամանքների հետևանք են:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

26. Լիցենզավորված իրավաբանական անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ տասնհինգ օրվա ժամկետում, հայտ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման համար՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

27. Կառուցման ընթացքում Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտես-սակայն ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձն անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ ներկայացված փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

28. Սույն Լիցենզիայում, ինչպես նաև Լիցենզավորված անձի կողմից ներկայացված ծրագրերում, ժամանակացույցներում և այլ փաստաթղթերում կարող են փոփոխություններ կատարվել թե՛ Հանձնաժողովի և թե՛ Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՋՆԵՐ

29. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների վերադարձման ընթացակարգը կարգավորվում է Հանձնաժողովի կողմից հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

30. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան 2017 թվականի հունիսի 1-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «Հազարի-2» Փոքր հիդրոէլեկտրակայանի՝ տեխնիկական և բնապահպանական փորձաքննություն անցած նախագիծը և ներդրումների իրականացման ժամանակացույցը:

31. Սույն Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտ-տույժային դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է սույն Լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

9. ԾԱՆՈՒՑՈՒՄ

32. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«01» դեկտեմբերի 2016թ.

N 258-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱԼԵՐԻԿ ԳԵՈՐԳԻԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ հոդվածների, 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գեորգիի Պողոսյանին (հասցե՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն քաղաք Մարտունի Վ.Խաչատրյան 31) հայտը բավարարել և տրամադրել դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Կ.Ե.ԱԹԱՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«5» դեկտեմբերի 2016թ.

N 264-Ա

ք.Ստեփանակերտ

**Ա Ն Հ Ա Տ Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ Ա Տ Ե Ր Ա Ր Մ Ե Ն Վ Լ Ա Դ Ի Մ Ի Ր Ի Գ Ր Ի Գ Ո Ր Ց Ա Ն Ի Ն
Տ Ր Վ Ա Մ Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Յ Ի ՈՒ Ժ Ը Կ Ո Ր Ց Ր Ա Մ Ծ Ճ Ա Ն Ա Չ Ե Լ ՈՒ Մ Ա Մ Ի Ն**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և Ա. Գրիգորյանի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2015 թվականի փետրվարի 20-ին «Ընտանեկան ստոմատոլոգիական և ատամնատեխնիկական» գործունեության համար անհատ ձեռնարկատեր Արմեն Գրիգորյանին տրված թիվ Ա-XX-000277 լիցենզիան:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում:

2) Անհատ ձեռնարկատեր Արմեն Գրիգորյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին:

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Կ.ԱԹԱՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» դեկտեմբերի 2016թ.

N 277-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄՀԵՐ ԺՈՐԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և Մ. Ղազարյանի 2016 թվականի դեկտեմբերի 8-ի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի դեկտեմբերի 20-ին «Ատամնատեխնիկական» գործունեության համար անհատ ձեռնարկատեր Մհեր Ղազարյանին տրված թիվ Ա-XX-000245 լիցենզիան:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) Անհատ ձեռնարկատեր Մհեր Ղազարյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Կ.ԱԹԱՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՈՅՏՄԲԵՐ
ԱՍՍՈՒՄ ՏՐԱՄԱՐԿԱԾ, ԴԱՂԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

06.11.2016թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
1	2	3	4	5	6	7	8
ՏՐԱՄԱՐՈՒՄ							
1	Ալբերտ Համբարձումի Դավթյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00513	11.11.2016թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	
2	ԱԶ Արթուր Գերամիսի Գասպարյան	ՏՕՆ00514	11.11.2016թ.		ԼՂՀ	անժամկետ	
3	ԱԶ Կարո Յուրիի Պետրոսյան	ՏՕՆ00515	11.11.2016թ.		ԼՂՀ	անժամկետ	
ԴԱՂԱՐԵՑՈՒՄ							
1	ԱԶ Վարուժան Մելքումյան	ՏՕՆ00151	23.11.2011թ.	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	դադարեցվել է 11.11.2016թ.
2	ԱԶ Հենրի Արզումանյան	ՏՕՆ00408	10.11.2014թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	
ԿԱՍԵՑՈՒՄ							
1	ԱԶ Սեյրան Աղաջանյան	ՏՕՆ00434	09.03.2015թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 09.11.2016թ.
2	ԱԶ Արմեն Դանիելյան	ՏՕՆ00409	10.11.2012թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 10.11.2016թ.
3	ԱԶ Վահիֆ Մարգարյան	ՏՕՆ00410	10.11.2014թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 10.11.2016թ.
4	ԱԶ Ռոբերտ Մկրտչյան	ՏՕՆ00414	19.11.2014թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 19.11.2016թ.